



ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք ՏԱՐԻ ԹԻՒ 14

ՀԱՐԱՐ

1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ՍԳՂՑՍԵՍՈՒՄԻ ԵՄԻՏՈՂՈՒՄ

ԶԵՆԻԹ

ՍԳՂՑՍԵՍՈՒՄԻ ԵՄԻՏՈՂՈՒՄ

ՄԻՆԿ ՆԵՐԿԱՅՆՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաճ-Գաբու, Սոփա-Պաճ հաստատություններ, Երևան, 16

آ. آندوربان) شرکت مطبعه سی — باب عالی جاده منده نوسرو ۵۲

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Բ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ուլի հաստատություն, Թիֆլիս 52

Հատը 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փամբգտման մեխանիզմներ
զր զանազան

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅՈՐԴ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն թափանչակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատան մէջ:

ՆԱԲԵԻՆԼՔԻ ՄԱՍՆԱԿԱԿԱՆ	ԲԵՐԱ	(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
		(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
	ԿԱԼԱԹԱՍ	(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
		(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
	ՊՈԼԻՍ	(1. Սուլթան համամ .
		(2. Սուլթան Պէյագլիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .
	ՍԿԻՒՑԱՐ	Զարչը Պօյու, թիւ 120 .

Կասաբեալ Երաւաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. քաղաքներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ Տասր փարա: ԱՐԵՒԵԼՔ հրա լարակ կ'իլլէ ամէն օր, կէս օրին, խրեանալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱՅԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բայց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագիրն պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին: Ղալաթիա, Մահմուտիէ Ճաատէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 14

ՇԱՐԱԹ

I ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907



ԱՀՄԷՏ ԾԷՀԻՄ ԷԾ.

ՏՆՕՐԷՆ ՆՈՐԱԿԱԶՄ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԲԻՆ

Ա Հ Մ Ե Տ Փ Ե Հ Ի Մ

Կարճըլիկ հասակ մը, խոշորկեկ գլուխ մը, պըճըլտուն աչուճներ, հանդարտ ու յուսա-վըրէպ կերպարանք մը — գրեթէ անհրապոյր կերպարանք մը: Ահա մեր Ահմէտ Ֆէհի-մը իր ընդհանուր գիծերուն մէջ: Այս լուրջ, անսեթեւեթ անհատականութիւնը փոխադրէ միտքովդ բեմին վրայ կատակերգական ո՛ր եւ է դերի մը մէջ, որ արուեստ կը պահանջէ, ճարտարութեան կը կարօտի: Ֆէհիմ որ մաս-նաւոր թիւ մըն է թատերական աշխարհին մէջ, գիտէ թափանցել իր դերին նրբութիւն-ներուն, բնատիպ միմիք մը կը ստեղծէ, կը չպարէ, կը հագուեցնէ, մարմին և հոգի կու-տայ անոր և շարժումի մէջ կը դնէ իր ան-ձերը: Դերին պահանջումը լա՛ւ է, արուես-տագէտը կուլայ, բայց Ֆէհիմը չէ որ կուլայ. խնդալ, քրքել պէտք է, կատակերգակը այնքան բնական կը կատարէ այդ տեսարանը՝ որքան պէտք է ոգեւորելու համար թատե-րասրահը. բայց Ֆէհիմ նորէն կը մնայ իր սո-վորական վիճակին մէջ, անժպիտ՝ իբրեւ թէ դիմակ մը ունենար իր դէմքին վրայ:

Ահմէտ Ֆէհիմ՝ անուղղակի յաջորդն է, տաճկահայ բեմին վրայ, Մկրտիչ Այալնեանի, Ռշտունիի, Դրեանցի և Չափրաստեանի, ուրոնց տաղանդը հռչակելու համար դրուա-տիքի նորանոր դափնիներ հիւսել աւելորդ պիտի ըլլար: «Անուղղակի» յաջորդ ըսի, անոր համար՝ որ Ֆէհիմ տարբեր դպրոցի մը մէջ ըրած է իր փորձարկութիւնները: Այն թուա-կաններուն՝ ուր մեծանուն Ահմէտ Վէֆիք փաշայի շնորհիւ Մօլիէռի բոլոր կատակե-րգութիւնները իրենց արժանի ոճով մը աաճկերէնի կը թարգմանուէին և Ֆասուլ-եաճեան ինքն ալ կուսումնասիրէր Մօլիէռի թիւերը, մի եւ նոյն խումբին մէջ կը հրա-հանգուէր Ահմէտ Ֆէհիմն ալ, որ այս պու-րագային կը պարտի մէկ մասն՝ եթէ ոչ մեծ մասը իր արժանիքին և ձեռք բերած յաջո-ղութիւններուն:

Հասկցաք անշուշտ թէ՛ Ֆէհիմ սովորա-կան դերասաններէն չէ, ան՝ խորունկ գի-

տակցութիւնը ունի իր ասպարէզին և ար-ուեստը իրեն համար միայն ասպրուստի միջոց նկատողներէն չէ: Ամէն ճշմարիտ արուես-տագէտ իր ընտրած ճիւղին մէջ իտէալին կը ձգտի, զրկանքները, նեղութիւնները և աս-պարէզեն անբաժան դառնութիւններ անկա-րող են վատեցնելու այս կարգի արուեստա-գէտները, որոնց մէջ աննշան տեղ մը չէ որ կը գրաւէ մերս Ահմէտ Ֆէհիմ: Ասոր ասպ-ցոյցն է դերերու ժաանաւոր սեռին կարե-ւորութիւնը դգացնելու համար ժողովուրդին առանձին խումբ մը կազմելու ձեռնարկու-թիւնը, որ ծանուցուեցաւ վերջին անգամ: Ֆէհիմ կատակերգակ խումբին կ'առաջ-նորդէ այսօր, իրեն աջակից ունենալով՝ Հէ-քիմեանը, Տէր և Տիկին Պիննէմէճեանը, Շահինեանը և Թոլայեանը:

Շտիկնեան աղուոր ոյժ մըն է Ֆէհիմ է-ֆէնտիի խումբին մէջ, Թոլայեան նմանապէս: Իսկ Տիկին Հէքիմեան և Պիննէմէճեանք՝ որոնք իրենց երկար ասպարէզը տրամներու մէջ անցուցած են, հարկաւ իրենց տաղանդին կոչում ընելու պէտք պիտի ունենան, այս նոր խումբին նոր սեռի դերերը իւրացնելու համար:

Ֆէհիմ էֆէնտիի այս նախաձեռնութիւնը կրկնակի դժուարութիւններով չըջապատած է, անոր համար որ թատերասէր հանրու-թիւնը գոհացնելու անբաւական են արդէն ծանօթ խաղացանկերու յաճախ կրկնուած զաւեշտները, եւ Ֆէհիմ ստիպուած է շատ ուժով և անձնուիրութիւնով փարիլ իր նոր ձեռնարկին. — զայն յաջողցնելը իրեն և իր ընկերներուն համար արժանապատուութեան խնդիր է: Թատերական նորութիւններու սի-րահար ժողովուրդը բաւական է որ ուզէ քաջալերանքի լայն բաժին մը ընծայել Ֆէ-հիմ և Ընկերութեան, ապահով ենք թէ՛ թեւ ու թռիչ պիտի առնեն և նոր ու ընտիր խաղեր պիտի հանեն նորակերտ բեմին վրայ, ուր Ֆէհիմին վերապահուած է ի հանդէս բե-րել իր արուեստագէտի տաղանդը:

ԱՅԽԱՐՀԱՐԱՐԻՆ ԽՆԴԻՐԸ

ԹԻՒՌԻԿ ԵՒ ԻՆՃԷՍԱՆ ԷՖԷՆՑԻ

Նպատակ չ'ունիմ բանասիրական գրութիւն մըն ալ իմ կողմանէս մէջտեղ նետելու: Գրագէտ-բանասէր մը՝ Փաստաբան-բանասէրի մը հետ բռնուեցաւ: Երկուքն ալ գրեցին ու կը գրեն դեռ:

Այդ երկու բանասէրներէն մէկուն դրամագլուխն էր գրագիտութիւնը, միւսինն ալ տրամաբանութիւնը:

Հիմայ կուզեմ գիտնալ թէ՝ փաստաբան-բանասէր մը ո՞ր աստիճան զօրաւոր փաստերով կրնայ եղեր հաստատել իր ըսածը: Եւ կամ այդ երկու արքիթթօններէն ո՞րը աւելի կը քշուի եղեր Աշխարհաբարի մանուածապատ հրապարակին վրայ:

Առջի բերան ըսեմ որ երկաթագործը իր երկաթը ունի, տոմարակալը՝ իր տոմարը, հացագործը՝ իր հացը և փաստաբանն ալ իր տրամաբանութիւնը: Այդ մարդոց ամէնուն մէջն ալ աղէկներ չատ կան. բայց իրենց աղէկ մարդ ըլլալնին չ'ենթադրեր որ անպատճառ իրենց ապրանքն ալ աղէկ տեսակէ եղած ըլլայ: Ընդհակառակը ժանգոտած երկաթի, աղտոտ տոմարի, օթեկ հացի և օթեկ տրամաբանութեան չատ կը հանդիպինք:

Ըսածնիս օրինակով մը հաստատած ըլլալու համար առնենք փաստաբան Ինճէեան էֆէնտիի՝ Արեւելքի 6647 և 6651 թիւերուն մէջ հրատարակած բանասիրական պատասխան յօդուածը, և պզտիկ պտոյտ մը կատարենք անոր կածաններուն մէջ:

* * Ինճէեան էֆէնտի կ'ըսէ. « Իսկ, ընտանիք, ընդունիլ, ընդունելի եւայլն բառերով ընդի գործածութիւնը, առտուով առի գործածութիւնը, ցերեկով ցի գործածութիւնը արդարացունելնիդ կը խոստովանինք որ մեր հասկացողութենէն վեր, չատ վեր է և կարողագոյններու օգնութիւնը կը հայցենք: Կատարելապէս կը սխալիք ուրեմն երբ ձեր այդ մէջ բերած օրինակներուն համար կըսէք թէ սովորութիւնը նուիրագործեր է զանոնք (ոչ զիրենք) ... »:

Տեսէ՛ք. « Կատարելապէս կը սխալիք ... » Կըսէ ան, առանց խորհելու որ ատանկ բա-

ցարձակ վճիռ մ'արձակելու համար պէտք էր գէթ օրինաւոր փաստերով հերքել իր ընդդիմախօսին ամէն մէկ ըսածը: Մինչդեռ ինքն է որ կը խոստովանի թէ ընդունիլ, ընտանիք եւայլն բառերով ընդի գործածութիւնը և միւսները, իր հասկացողութենէն վեր, չատ վեր է, և թէ կարողագոյններուն օգնութիւնը կը հայցէ: Քանի որ ատանկ է, այդ պարագային պէտք էր նաեւ վճռելու իրաւունքն ալ կարողագոյններուն վերապահել: Եւ որովհետեւ ինք, բուն իսկ իր խօսքով իր հասկացողութենէն վեր եղող խնդրոյ մը մասին յախուռն վճիռ մ'արձակելու չի վարանիր, ուրեմն իր ընդդիմախօսին ուրիշ բան չի մնար եթէ ոչ խնդիրը երկրորդ յօդուածով մը խսթիմա ընել և ըստ օրինի հակառակորդ կողմին անճարակութեան վճիռը ձեռք ձգել յասենի հանրութեան:

* * Ինճէեան էֆէնտի կ'ըսէ. « Գալով բացի բացին, Պօլսեցի ժողովուրդը զայն ջուրի պէս կը գործածէ և երբէք չ'ըսեր բացի ի բաց, ինչպէս չ'ըսեր պատուհանէ ի պատուհան, տունէ ի տուն ... եւայլն »:

Կ'ուզէք որ ես ալ ելլամ, մի եւ նոյն տրամաբանութեամբ ապացուցանելու թէ ժողովուրդը հաց չ'ուտեր երբէք: Ահաւասիկ. « Գալով հացի խնդրոյն՝ ժողովուրդը զայն չ'ուտեր երբէք, ինչպէս չ'ուտեր քար, հող, փայտ, ածուխ եւայլն »:

* * Ինճէեան էֆէնտի կ'ըսէ « ... ինչպէս ըսեր էք, ուրիշ օրէնքներու մէջ այնքան քաջահմուտ եմ եղեր: Ըսել կուզէք որ պէտք էինք գրել նախադաւուր և ոչ նախդիրաւուր: Եթէ հաւատացեր էք որ ուրիշ օրէնքներու մէջ քաջահմուտ եմ, կրնաք նաեւ... բայց մենք կ'երեւայ այս մասին ձեռն բան մը աւելի գիտեմ եղեր, ուստի հաճեցէք մշտիկ ընել »:

Հիմայ, ո՞վ ընթերցող, զայն մտիկ ընելու տեղ, եկուր քիչ մը զիս մտիկ ըրէ:

Դիտուած է որ յաճախ՝ գիտցածնին թերի եղող մարդիկ « ես գիտեմ » կը ծախեն, և չատ գոհ կը մնան եթէ ուրիշ մէկը « դուն գիտե՛ս » ըսէ իրենց:

Ինճէեան էֆէնտիի գրութեան մէջ գրտնուած « ... բայց մենք կ'երեւայ այդ մասին ձեռն բան մը աւելի գիտենք եղեր ... »

պարբերութիւնը դժբախտաբար «ես գիտեմ» կը թարգմանուի: Իսկ իր ընդդիմախօսին յօդուածին մէջ գրուած «դուն գիտե՛ս» ի համարօ՞ք սա բացատրութենէն «դուք որ ուրիշ օրէնքներու մէջ այնքան քաջամուտ էք...» Ինձե՛եան էֆէնտի այնքան կ'ախորժի որ 4 առդի մէջ երկու անգամ կը քչէ զայն:

* * Ինձե՛եան էֆէնտի կ'ըսէ. «Մի՛ մոռնա՛ք որ այսօրուան Պօլիսի աշխարհաբար, թէեւ հին հայերէնի զաւակը, բայց անկէ բոլորովին տարբեր է, ունենալով իր քերականական յատուկ կաղմակերպութիւնը: Դուք ալ ձեր հօրը զաւակն էք, բայց այսօր անկէ բոլորովին տարբեր անձ մը եղած էք...»:

Իրա՛ւ կ'ըսէք, Ինձե՛եան էֆէնտի, բայց ձեր այդ փաստին մէջըրբութիւնը աննպաստ է ձեր դատին: Իրա՛ւ է որ ես հօրս զաւակն եմ, ու թէեւ անկէ տարբեր անձ մըն եմ եղած, սակայն աս ու ան, ինծի համար հօրը կը նմանի կ'ըսեն: Ըսել է խօսուածքիս, քաղուածքիս, և կամ, ինչ գիտնամ, թերեւս նստուածքիս մէջ կայ անողոք անբռնաբարելի ԲԱՆ մը անշուշտ, որ հօրմէս եկեր ու մէջս է խառնուեր:

Արդ, «ընթանիք»ին, «ընդունելի»ին մէջի ընդ ՚ որ ձեր հասկացողութենէն վեր էր, այդ մի եւ նոյն ԲԱՆն է, որ գրաբարէն, անողոք անբռնաբարելի գրաբարէն՝ աշխարհաբարին, այսինքն, ձեր խօսքով, հօրմէն եկեր զաւակին մէջն է խառնուեր:

Հիմայ ալլուս պէտք պիտի չունենանք, կարծեմ, կարողագոյններու օգնութիւնը հայցելու: Անարժանաբար, անո՛ւ ես կ'ստանձնեմ զայն լուսաբանելու դերը:

* * Ինձե՛եան էֆէնտի կ'ըսէ. «Աշխարհաբարի մէջ առանձին ոչ դեպ ոչ ի նախադրութիւնները ունինք, այլ միայն դեպի նախադրութիւնը՝ որ չարժական չէ երբէք: Իսկ իվեր նախադրութիւնը... աշխարհաբարին սեփականութիւնն է...»:

Մի եւ նոյն տրամաբանութեամբ ես ալ պիտի ըսեմ որ տիեզերքին մէջ առանձին ոչ արեւ և ոչ մթնոլորտ ունինք, այլ միայն անդուսի կտորէ երկինք մը որուն վրայ փակած է Արեւը, եթէ չէք հաւատար, աչքերնիդ մէջ մը վեր առէք:

Իմ գիտնալս, դեպի և իվեր նախադրութիւն չունինք: Իկոնջին՝ պարզապէս դեպի հնչած ըլլալուն համար ի՛նչ դեպի փակած է ըսողը, վաղն ալ, ըսածիս պէս, կ'ելլայ Արեւը երկինքին փակած է կ'ըսէ, քանի որ ան ալ այնպէս կ'երևայ մարդուս աչքին:

* * Ինձե՛եան էֆէնտի կ'ըսէ «Մենք մեր դիտողութիւնները զարոյցի գրասեղաններէն սկսելով աղէկ մը հասունցունելէ ետք, գեւ երէկ միայն մէջտեղ հանեցինք: Դուք ձեր քննադատականը ինչպէս գրեցիք: Ծառաթկէս օրէն ետքը լոյս տեսնող յօդուածս նոյն օրը ափափոյ կարդացիք, կիրակի 6 սիւնակ բան գրեցիք, երկուշաբթի տպարան յանձնեցիք որպէս զի երեքշաբթի չարուի և չորեքշաբթի հրատարակուի»:

Եւ եղեւ վաղորդայն օր հինգերորդ... Եւ ի՛մ եղեւ կարգ խօսելոյ:

Մեր փաստաբան բարեկամը կը զարմանայ թէ ինչպէս մէկ օրուան մէջ կարելի կ'ըլլայ եղեր պատասխանել, զարոյցական գրասեղաններէ սկսելով հասունցուցած իր քերականական դիտողութիւններուն:

Բայց այդ շատ պարզ է, ո՛վ ըսաւ ձեզ թէ ձեր ընդդիմախօսը իր պատասխանը մէկ օրուան մէջ պատրաստելու համար իրեն օգնութեան չէ կանչած ձեզի պէս տաս տասնը հինգ տարուան մէջ իր ամբարած հմտութիւնը: Նպարավաճա՞ռ կը կարծէք արդեօք ձեր որ եւ է մէկ ընդդիմախօսը: Եւ ինչ է ձեր ուղածը. տաս տասնըհինգ տարիէ ի վեր ձեր հասունցուցած քերականական դիտողութիւններուն պատասխանելու համար, տասնըհինգ տարի սպասել ու այնպէս հրապարակ նետուելու էր:

Այս տրամաբանութեան խելքս չի հասաւ, ու հասնելիք ալ չունի:

Ինձե՛եան էֆէնտի երկու անգ իր ընդդիմախօսին ըսածը նոյնութեամբ իրեն քչա՛լ ուղեր է, ու այդ մտածումէն այնքան է հալածուեր որ, ծոյլ աւակեցին օրինակը քչելու իր բռնազբօսիկ ճիգին մէջ ակամայ հասունութեան մէջ ալ ինկեր է ըսելով «տպագրական ճղճիմ սխալներով զբաղելու չափ մէն bon sens մէկ կողմ նետեր էք...»:

Մինչդեռ իր յօդուածին սկիզբը կ'ըսէր ընդդիմախօսին «ձեր քննադատականը նպատա-

կաւոր ազտոտ միառններէ բոլորովին զերծ է» :

Հակասութեան մէջ իյնալու ասկէ աւելի հոգեկու օրինակ դուք կրնայի՞ք երեւակայել, արեւելի ընթերցողներ :

* * * Ինճէեան էֆէնտի կ'ըսէ. «Կ'երեւակայեմ որ ամօթէն շառագունեցաք արդէն...» :

Մեզի անանկ կուգայ որ — կ'երեւակայեմք — Թէոդիկ իրաւ շառագունած ըլլալու է արգահատանքի տաք վերաբերումով մը հանդէպ անո՛ր՝ որ կը յանդգնի իր հակառակորդը փոխանակ շօշափելի փաստերով նեղը ձգելու՝ երեւակայական ամացի հարուածներ տեղացած ըլլալ անոր այտերուն :

Այս առթիւ մանկունակ յիշատակէ մը կը հալածուիմ :

Դպրոցին մէջ շատ ծեծ կերած եմ, և ամէն ծեծ ուտելուս ինքնիրենս «միւսիւին լսերը անիծեցի» ըսած եմ, անոր համար որ երբ հարուածը կ'ուտէի, անպատճառ բաներ մը կը մոլտայի քիթիս տակէն :

Հիմայ մի եւ նոյն սրտի գոհացումը կուտենայ ինճէեան էֆէնտին, կարծելով որ՝ իր յօդուածով՝ ինծի պէս բաներ մը ըրած ու «ընդգիծախօսին խերը անիծած է» : Շառագունեցաք կ'ըսէ. իրա՛ւ է, ես իմ մասին, հաւատացէք որ իրա՛ւ շառագունեցայ երբ այդ կտորը կարդալով՝ տղայութիւնս միտքս ինկաւ :

Տղայութիւն ըսի, Ածանցումի, բարդութեան ու հոլովումի խնդիրը միտքս ինկաւ :

Թէոդիկ, է՛... ա՛լ երկար ըրիք. դուն խիղճ չունիս որ փոխանակ իրեն երանքներ կարդալու, եւեր երանելի կը բացագանչես քաղութիւնը հոլովումին հետ չփոթած ըլլալուն համար՝

Ան՝ որ դպրոցական գրասեղաններէն սկըսելով հասունցուցեր է իր քերականական դիտողութիւնները :

Ան՝ որուն համար կ'ըսես թէ քաջահմուտ է ուրիշ օրէնքներու մէջ :

Ան՝ որ քեզմէ բան մըն ալ աւելի գիտէ եղեր :

Ան՝ որ խեղճ «իրենց» ին օձիկէն երկու անգամ սրունք ու բանտարկեր է փակագիծի մէջ :

Ան՝ որ եւեր Բարիկ է գացեր :

Ան՝ որ criteriumի սխալներու կարեւորութիւն չի տար :

Ան՝ որ տարիներով droit է սորվեր :

Ան՝ որ droit romain է կարդացեր :

Ան՝ որ լատիներէնի է աշխատեր :

Ան՝ որ

Իր յօդուածէն կենսագրական գիծեր այսչափ միայն կրցայ քաղել . . . բայց, ներեցէք . . . շեղեցայ նիւթէս. ուստի նորէն դառնանք բուն խնդրոյն և իբր վերջաբան ըսենք թէ՛ Ինճէեան էֆէնտի լաւագոյն բան մ'ըրած կ'ըլլար եթէ երբէք զգուշաւոր մուտք մը գործեր աշխարհաբարի շէնքէն ներս, որուն տակաւին բաւիղ մը ըլլալը կերպով մը ցոյց կուտայ արդէն ինք, և իր յօդուած-Քերականութեան վերջամասով (Մասիս) համեստօրէն կոչում կ'ընէր գրագէտներու և քերականներու որ իրենց կարծիքները փոխանակեն իրեն հետ ու ինդիրը . . . Սալիի յանգեցնեն :

ՇԱՐԱԳԻՏԱԿ

ԶՈՐՍ ԽՕՍՔ

ԻԲՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Այն բոլոր բերանացի թէ գրաւոր հարցումներու զօրս կուղղուին մեզ, գիտնալու համար թէ՛ 1908ի մեր Կաղանդի բացառիկ թիւը պիտի հրատարակուի թէ ոչ :

Տնօրէնութիւնս քաջալերուած այն տաք վերաբերումէն՝ զոր ցոյց տուած է հանրութիւնը ամէն նմանօրինակ բացառիկ թիւերուն հանդէպ, մեզ պատիւ կը համարինք յայտարարել թէ՛ մտադիր ենք, ինչպէս ամէն տարի՝ նոյնպէս և յառաջիկայ Կաղանդին հրապարակ հանել թիւ մը՝ որուն նմանը ԵՐԲԵՔ ԵՒ ԵՐԲԵՔ հրատարակուած չէ կըրնանք ըսել :

Թէ ինչ պիտի ըլլայ այդ թիւին պարունակութիւնը, և թէ ինչ ձեւի տակ պիտի հրատարակուի, թող անուշ անակնկալը ըլլայ մինչեւ Դեկտեմբերի վերջին շաբաթը, երբ լայնօրէն պիտի փութանք գիտցնել մեր Գերագնիւ ընթերցողներուն և Պատ. Բաժանորդներուն :

Ուրեմն Հանրագիտակ՝ իր բացառիկ թիւը պիտի ունենայ 1908ին :

Ահա մեր խմբագրական թուլբերանութիւնը՝ համակիր հետաքրքիրներուն գոհացում տալու համար :

ԱՆՏԻՊԱՆԻ ՕՒՅԳԻՐ

Իբիսիցի պիր կիւնսե
Քէնսիսէ պէնս էլլէսիմ,
Պիրի կիւլ պիրի դոնէ
Քիսսէլէ կէօսքէրէսիմ :

Այսպէս կ'երգէ Թուրք բանաստեղծը իր երեւակայական զոյգ սիրուհիները, որոնց համար կըսէ թէ մէկ օրուան մէջ սիրած է երկուքն ալ, վարդը և կոկոնը. ու կը շուարի : Ես ալ անանկ, եթէ ոչ մէկ օրուան՝ գէթ մէկ շաբթուան մէջ սիրեցի երկուքն ալ :

Երկուքն ալ ուտուելիք ... պիտի ըսէր մեր մեծ բիւ պօղաղը՝ Ալփիար, և խաչ որ անանկ էին :

Instruite, գեղեցիկ, մոտ, կիրթ և կարծեմ թէ ասկէ աւելին պահանջելը ... sa serait rigolo !

Ձեմ գիտեր ինչպէս տեսայ Աննէթը և չեմ յիշեր ինչպէս սիրեցի Լիւսին :

Երկուքին վրայ ալ կը խենդենայի, սակայն առանց գիտնալու թէ եփնի քի եփնուցանէ ես մեկս ... :

Հիմա :

Մին յիշած ժամանակս՝ միւսը կուգար իր տարրեր անուշութիւնները պարզել մութիս հորիզոնին վրայ, ու աչքերս պահ մը մէկէն միւսը կը դառնային, առանց մոռնալու սակայն նախորդը կամ ցիւմերօ ֆրոսքը :

Անտանելի վիճակ մը, անել կացութիւն մը, որուն դիմանալու համար մարդ կամ նոր Ձէլանտա ծնած ըլլալու է և կամ Այրեցեալ գօտիին մօտերը :

Մէկուն սիրային նամակ մը գրելու համար գրասեղանիս առջեւ անցած ատենս՝ նաքօլէօնը կը յիշէի, որուն համար կըսեն թէ ութը տասը գրագիրներու տուն կուտար մի եւ նոյն ժամանակ, և իսկոյն ուրիշ թուղթ մ'ալ առնելով երկուքին մէկ կսկսէի գրել, որոնց մէջ « կը սիրեմ » խօսքը չարաչար կը տանջուէր գրչիս տակ :

Դպրոցական չըջանիս մէջ Ֆիգիի դասէն

միտքս մնացած է թէ երկու բան մէկտեղ մը չեն կրնար գրուիլ, բայց և այնպէս երկուսէր եկած տեղաւորած էին սրտիս մէջ, որոնցմէ և ոչ մին կրնայի ճամբու դնել :

Թէ ինչպէս եղաւ որ Աննէթին և Լիւսին սիրտ, սէր տուի, պատմեմ և դուք կարդացէ՛ք՝ եթէ տասն ութէն մինչեւ քսան տարու երկուսարդ մը չիկայ սենեակնուդ մէջ :

Իրիկուն մը բարեկամներէս մին եկաւ հըրաւիրել զիս երեկոյթի մը և այնքան ստիպեց որ մերժելս անկարելի եղաւ :

Քօսթիւմ, թուալէթ, պօթ, քուլաթ, ամէն բան ունէի, և չերթալս ապուշութիւններուն գլուխ գործոցը պիտի ըլլար, ուստի ... : Կէս ժամուան մէջ ինքզինքնիս փողոցը գտանք :

Ձիւնախառն անձրեւ մը կը տեղար մութին մէջ, հակառակ օրացոյցին խօսքին որ կըսէր՝ չոր և պարզ. գետինը ցելս, ճըմբ ճըմբ, և ոչ ոք կար փողոցին երկայնքը, բացի մէկ քանի խմաններէ՝ որոնք կապելաներէ կը դառնային չոգիացած գանկերով :

Բաթօներնուս օձիքը վեր, աչքերնիս գետնի մայթին քարերուն վրայ, յառաջանք, մէկ քանի փողոցներ կրկնելէ վերջ կանգ առինք տան մը դրան առջեւ, որուն գոց ճերմակ վարագոյններուն ետին սինէմաթօկոաֆի պէս շուքեր կ'երեւակային :

Ներսը խլացուցիչ քահանաներու և բարձրաձայն խօսակցութիւններու արձագանգը՝ մինչեւ փողոց կը լսուէին ... :

Պահ մը վերջ՝ խոշոր սենեակին մէջն էինք, անձանօթներու օրու էգ ժխորի մը գիրկը :

Գրեթէ ամէն ատեն նոյն բանը կը պատահի անոր, որ առաջին անգամ նոյն օրինակ երեկոյթներու կը գտնուի, նախ ապուշ-

յևայ անուշ տպաւորութեան մը ենթակայ:

Տարեց կիները բազմոցներու վրայ ծալ-
լուած, այրերը անոնց առնդէր, թարմ կի-
ները և օրիորդները աթոռներու վրայ, և
պարիկ միւսիւնները հոս հոն:

Առաջին անգամ ներս մտնելու՝ խօսք-մէկ
ըրածի պէս երկուքն ալ անկիւնը քով քովի
թեւերնին ալ entrelacé կը խօսակցէին ան-
շուշտ ... գտնուած երիտասարդներուն վը-
րայօք ... և ես իրենց նոր նիւթ մը ան-
վըէպ:

Միջակորեար սուտաէի մը միւղիւքը ինչ
կ'ըլլայ ... արօտաէօն մը, ներսի սենեակէն
սկսաւ ճզալ, որուն առաջին ծայնէն իսկ երկ-
սեւ երիտասարդութիւնը դրուեցաւ:

Պահ մը մէկ քանի վոյգեր սկսան դառ-
նալ հինգ մէթը քառէ սենեակին մէջ, որ
այդ իրիկունը salon de danseի վերածուած
էր: Քօնսօլին մօտ քանաւա բուրդէ զար-
դերու վրայ զոյգ լամբարները կը դիտէի ան-
խօսուկ, որոնք կը վառէին միօրինակ անշուշտ,
ո՛ր գիտէ մինչեւ երբ, ու դէմս նոյն այդ զոյգ
աղջիկները մերժելով բոլոր դիրքնք ի պար
հրաւիրողները, կը շարունակէին խօսուր ատի,
անշուշտ ո՛չ Բագրատունեան կիրակնօրեայ
դպրոցին՝ ալ սիրային նիւթերու վրայ:

Երբ ամէն ոք իր սիրած ձեւովը սկսաւ
զրօսնուլ, տեսայ թէ երկուքն ալ ինձմով կը
զբաղէին, ինծի կը նայէին և անպատճառ
խօսակցութեան նիւթն ալ ես էի:

Եւ որովհետեւ չէի այն խակ պատանինե-
րէն՝ որոնք երբ կանացի աչքերուն իրենց
վրայ կեղորոնաալը զգան կաս կապուտ կըլ-
լան ու սենեակէն դուրս կը փախին, ուստի
իրենց նշանակալից նայուածքուն՝ ես ալ
պատասխանեցի ձեւով մը՝ որ միմիայն ա-
մուսնութենէ խորշող և իրենց հաճոյքը,
կեանքը, ամուրիութեան մէջ փնտռող երի-
տասարդները կը հասկնան:

Յաջորդաբար մեծարուած քո եակը կար-
ծեա ոյժ, շոգի և մղում տուաւ ինձ, երթալ
հրաւիրելու առոնցմէ մին, պարելու համար:

Այո, առնցք մին ... բայց ո՞րը առաջ,
քանի որ կը հասկնայի թէ երկուքն ալ մի և
նոյն վերաբերումը ունէին հետս, ու ես մին-
չեւ այն առնն չէի կրցած զանազանել շապիկ
մը վար շապիկ մը վեր երկու քէն մին:

Վերջապէս երբ Աննէթ որ տարիքով քիչ
մը պզտիկ կերեւար Լիւսիէն, չեմ գիտեր
ինչպէս եղաւ, սենեակէն դուրս ելաւ կամ
կանչեցին, իսկոյն Աննէթին մօտեցայ և պարզ
մէկ քօմբլիման մը բաւական եղաւ անոր՝
բազուկներու մէջ նետուելու ... վալսի մը
համար զոր ճզուած արօտիօնը կը զարնէր
դուրսէն *faute de mieux*!

Երկուքս ալ կը դառնայինք, երկուքս ալ
գինով նորածագ սիրային արեւի մը շեշտակի
ճառագայթներէն ոգեւորուած, սիրտ սիրտի,
կուրծք կուրծքի, ու բնաւ յոգնութիւն չէինք
զգար:

Երկուքս ալ իրարու զգացուցինք թէ՛
հաւնած ենք զիրար:

Քիչ վերջը երբ արօտիօնը զարնողը կե-
ցուց իր յոգնած մատները, Աննէթը տարի
իր աթոռը յանձնել: Լիւսի, լեցուն աչքերը
վրաս յառած՝ կուրծքը ալիքներ կը ձեւաց-
նէր և փեթուտելու աստիճան քաշելով կը
խաղար կապոյտ պլուզին վրայէն կախուած
ժապաւէններուն հետ:

Չար բաղդ, ինչ անուշ և à propos պիտի
ըլլար եթէ պարը շարունակուէր և ես առի-
թը ունենայի Լիւսիին հետ ալ երկու *tour* ը-
նելու ...:

* * *

Այդ իրիկունը մինչեւ արշալոյս իրենցմով
զբաղեցայ և իրենք հիմնովին սիրտս գրա-
ւեցին, այնպէս որ երբ առաւօտուն հրաժեշտ
կուտայի տունէն՝ երկու բառ աւելի կամ
պակաս չի կրցայ ընել ոչ Աննէթին ոչ Լիւսիին:

* * *

Տարի մը ամբողջ, առանց միոյն կամ միւ-
սին կռահել տալու թէ՛ երկուքին հետ ալ
յարաբերութիւն ունիմ, թղթակցեցայ, տե-
սակցեցայ, և անցուցի այն անուշ *période*,
որ սիրահարները միայն կը զգան:

Թէ ինչպէս բաժնուեցայ այդ հուրիններէն:

Պարզ ալ զանեցուցիչ պարագաներու
տակ. ինչպէս:

Օր մը Աննէթի հետ երբ իրենց պարտէզին
անկիւնը ծառի մը շուքին տակ կտուց կտուցի
կը տեսնուէինք, յանկարծ ինչ տեսնամ ա-
ղէկ ... ականջները աղտեղութեան մէկ մէկ
սեքօններ էին դեղին մածուցիք ...:

Իսկ Լիւսիին, օր մը առանց իրեն կռահել
տալու կը դիտէի, երբ ան պատուհանին առ-
ջեւ նստած ինծի կպասէր, տեսայ թէ ցու-
ցամառը քիթին մէջ, անդադար կոլորէր օւ
կոլորէր ...:

Այդ օրերէն լքեցի, գեղեցկութեան պատ-
րանքը՝ որուն տակ լղրճուկութիւններ պա-
հուած գտայ ...:

ԲՕՊԻՍ

ԲԵԼ ՍԵԼ

Աշխարհաբարի խնդիրը նորէն կ'արծարծի: Կ'երեւայ թէ, աշխարհաբարը՝ ան փոքրիկ շփացած աղջկնակը, մանկութիւնը լրացուցած, մտած է հասուկ տարիքը, ուր ա՛լ կըսկսի խօսակցութեան նիւթ դառնալ և բամբասուիլ:

Բացէք այսօր մեր բոլոր թերթերը, և պիտի տեսնէք որ ամէն խմբագրապետ «Կ.Պոլսոյ գործակալութեան» մէկ հեռագիրէն սիւնակներ առաջ բան մը գտած է տպելիք անոր վրայ:

Չգտնողն ալ կը յարմարցնէ կոր իր կողմէ:

Գրաբարը շատոնց անգեղնական դարձաւ, հիմա ալ մարմաջ մը կայ արդի աշխարհաբարը անդին խրկելու: Առանց սակայն տեղը նոր մը դրած ըլլալու:

Չարմանալին ուր է, դրամական այս critique տագնապին մէջ, որ փաստաբաններու հացին եղ քսուելիք Saison Vivanteն է իրաւամբ, անոնք են որ մատերնին փաթթած են այս խնդիրը:

Հրանտ Ասատուր, իրաւունք ունի աստիճան մը անով հետաքրքրուելու, որովհետեւ ա՛ն էր որ աշխարհաբարի ՍՏՆՏՈՒՆ եղաւ, և հիմա ալ բնական չէ՞ որ ինք ըլլայ այդ հասուկ Օրիորդին ընկերակից անգլուհի MISSը:

Բայց, Արմենակ Ինճէեանը, (աման կաղաչեմ Պր. Գրաշա՛ր, ամէնէն առաջ տակը «ՓԱՍՏԱԲԱՆ»ը փակցնելու մի՛ մոռնար), սա կըրթիկ դէմքով չիք mondaine այս գործին մէջ

Ամէնէն առաջ Սմբատ Դաւթեան բաներ մը գրեց անոր վրայ, բայց մարդը երբ տեսաւ որ աս ալ «ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ» ին պէս կնճռոտ բան մըն է, վազ եկաւ:

Նաթանեան ալ փորձեց, բայց փորձը անփորձ ըլլալուն՝ փորձութեան չենթարկուած վերջացաւ:

Ասոնցմէ հտքը քանի մը հատ ալ նրոք պիտեմք յօդուածներ, և ահա, ասպարէզը մնաց երկու փաստաբանի և մէկ մ'ալ թէոգիկի ձեռքը:

Եւ մէյմը որ խեղճ աղջիկը փաստաբան-

ներուն ձեռքը մնաց, վա՛յ իր գլխուն: Որը վար պիտի քաշէ՝ որը վեր, մինչև որ երկու կտոր ըլլալ հէզը:

Կը յուսամ որ խնդիրը ԻՐԱՐԱՀԱՍԿԸՅՈՂՈՒԹԵԱՄԲ կը փակուի և աղջիկն ալ բան մը չըլլար, հակառակ ԵՕԹՆ ՀՈԳԻ ըլլալուն, միայն թէ սա պիտի խնդրէի Ինճէեան էֆէնտիկն որ արդի աշխարհաբարը ԻնճէՏՄԻՇ Ընեմ Ըսելով բոլորովին ԻնճէՏՄԻՇ չընէ:

* * *

Տասնը հինգ օրէն շատ շատ հրապարակը պիտի ողողուի նորէն տարեցոյցներով, միայն թէ, ինչպէս կը հաւաստեն մեզ «ԹԷՈՂԻԿ»ինը այդ ընդհանուր delugeին մէջ պիտի լողայ Նոյեան տապանին նման, որ ամէնուս գիտցածին պէս ամէն տեսակ կենդանիներէն զոյգ մը ունէր իր մէջը:

Նորէն ՍԻՊԻԼ նորավէպ մը պիտի հրամցընէ մեզ, նորէն Հ. ԱՍՍՏՈՒՐ վաթսուհական թուականներէն բաներ մը պիտի մրմնջէ մեր ականջին, նորէն պատիւը պիտի ունենանք վայելելու Զ. ԵՍՍՅԵԱՆը իր ՄԱՐԴՈՅԸ պէս չնորհքով բանով մը:

Նորէն Ա. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ անհասկնալի կտորով մը պիտի երեւայ, նորէն ԳԱԶԱՆՃԵԱՆ մեզ պիտի ջանայ հասկցնել թէ՛ հայերէնը թուրքերէնէ թէ՛ թուրքերէնը հայերէնէ փոխ առած է, զոր ինքն ալ դեռ չէ հասկցած դժբախտաբար, նորէն ՉԻՅԹԷ-ԱՍՐԱՅ կանանց բաղնիքի յօդուածով մը, և վերջապէս՝ նորէն ես դուն ան, մենք դուք անոնք (ո՛ւր է փարաները ցնձացող սակայն):

Բայց կէտ մը, որ անցած տարուանին վրայ կրիայի քայլ մը ըսել է:

Բոլոր տարեցոյցները որոշէր են չորս տարուան վրայէ վրայ գործածուած փոփոխութիւնները ա՛լ հանգստեան կոչելով նորեր պատրաստել, կրկին նոյն հին կեօթիկի դէմքերով, միայն թէ այս տարի պառկած դիրքով ?

Բերա

ԿՐԱՀԻՐԱՀԱ





ՀԱԻԿԻԹԻՆ ՄԵՋԻՆԸ

[ԶԻՒՊՊԵՅԱԲՈՅՐ ՅՕԴՈՒԱԾ]

Շաբաթ իրիկուն մը ուշ ատեն Ղալաթիոյ քարափին վրայ, Մէսաթըրիի Պակսաս շոգենաւը՝ լոր՝ ածեց սիւսի վրի միւսիւ մը, ութուկէս սանթիմ օձիքով, ոսկեջուր ակնոցաւոր և պեխերուն պէս պիզ պօթերով:

Այսպէս կ'սկսին ընդհանրապէս վէպերը, և սակայն մեր պատմութիւնը վէպ մը չէ, այլ իրական պատմութիւն մը, որուն ճշտութեանը պիտի վկայեն ամէն անոնք, որոնք քիչ մը վաղը պիտի հասկնան թէ որու վրայօք է, և կամ որու շուրջ կը դառնայ խօսքը:

«Ապուշ թըջող» անձրեւ մը անընդհատ վը տեղար, իրենց ճամբորդներուն սպասող ծնողաց, քարեկամաց և ծանօթներու վրայ, մինչ շոգենաւէն ելլողները, իրենց պակածներով կուգային կը նետուէին անոնց գիրկը, և ընդհանուր սուլու պաշիկներու չափեր տուքները լսելի կ'ըլլար ամբողջ քարափին երկայնքը:

Միւսիւ Պաթիսդէ անձրեւէն թըջած ակնոցին տակէն չորս դին կը նայէր ծնողքը գտնելու տենչով, մինչ անոնք իրենց կարգին, խենդ հաւերը դարցած էին իրենց մէկհատիկ զաւակը ժամ առաջ գրկելու մարմաջով, զաւակ մը որ, ութը տարիէ ի վեր եւրոպա՝ Բարիզ կը գտնուէր ատամնաբոյժ՝ dentiste ըլլալու համար:

Միքայել աղա, մէկ երկու աստիճան աւելի ծռած էր հողին, իսկ Տիկին Էպրոս մազին ներկը Ֆեռանաք եկած ըլլալուն, Պաթիսդէի համար դժուարին էր արդարեւ՝ այդ կարեւոր մեքամօնօգնները ճանչնալ բազմութիւն մէջ:

— Աստուծու սիրուն, մէյ մը խաբտա-

նին հարցուր Միքայել աղա, կը ճուար էպրոս, ան մութլախ աս վարդով պիտի գար...

— Նասըլ, կրնաս նայիմ սա տողիս առան քիւֆիւր մը լսել տար..., իշտէ մէկիկ մէկիկ կ'ելլան կոր, խառընճա չէ քի վրան կոխեն եա, խօսխօճաման տէլիսանը եղած է հիմակ, հէմալ մեզի չի ճանչնար չէ՞ եա...

— Քա եավրուս, արեւը սիրեմ, կը ճանչնայ ամա, երկու տարի կընէ քի մազիս պոյան ձգեր եմ, հիմա ասանկ գթան տես նալու ըլլայ նէ պէլքի չի ճանչնար, տուն իսէ մուխավայի պէս երկու խաթ էս եղեր ալթըն...

— Ես տահա տէմիր չէլիկ մը մնայի տա... նէ իսէ, իրեն ուղուուն իւշ քէօշէ եղանք...

— Կայնէ նայինք սիւրիւ մը չաբխալը կեկան կոր. գիտես քի սա սե բալթօլուն Մկրտիչն է... քա հա՛, ա՛ն է ան, վույ Միքայել աղա առաջ անցիր, Մկրտիչս...

— Կայնէ նայինք ճանըմ, կրնաս նայինք իս թէփէ թախա ծովը ձգէր զաւակիս ուղուին, զաթը եղանք եղանք աս հալը եկանք, մէյ մընալ քիւսքիւթիւնէ մահվ ըլլանք երթայ լմնայ...

— Քա Մկրտիչս, պոյը սիրեմ, ֆիտան եավրուս..., ըսելով մինչ երկուքը մէմ ընդ առաջ կ'երթային, միւսիւ Պաթիսդէ, գըլխարկը օդին մէջ իրենց գիրկը կը նետուի ու պահ մը արտասուխառն ուրախութիւն մը կը պատէ զիրենք:

— Վույ բարով եկար եավրուս, պոյըդ սիրեմ կէօզիւնտէքի ըրիր մեզի, աս ութ օր չէ, ութը ամիս չէ, թամ ութը տարի...

— Բարով եկար օղլում, Աստուած բանըդ գործդ աշողէ, սըտեղէն առապա մը նստինք տէ վեր ելլանք, ըսիլուն վրայ, միւսիւ Պաթիսդ խօսք առնելով։

— Բաղտօն մայդ ... էս քը վու զ'ավէ էօն ֆղան ... ը' ... ը' ... աս մաղդուն բուղ պուաղ պիտի տամ ...

— Աչկս ելլայ եավրուս, կիւվէրթէյով եկար ինչ եղար քի՝ աստանկ քէսկին կէօք-սիւտ ինչեր է ... հէմէն աս իրիկուն կըռ-նակդ իսպիրթոյով չիեմ տէ, տաք տաք ալ ըխլամուռ մը եփեմ քի ծանըդ պացուի կըսէ էպրոս՝ ուրախութենէն թրջուած աչքերը սրբելով։

— Ի՛նչ է ան օղլում, ֆրանք տէյի բան մը ըսիր ամա չի հասկցայ ... ի՛նչ, վաքօռին մէջը պա՛րտք ըրիր, ի՛նչ ըրիր ...

— Նօ՛ ... աս կաղսօնը ող պակաթնեղս բեղաւ, պէտք է ող բուղ պուաղ տամ ... կը կրկնէ Պաթիսդ՝ հինգ մատները ինը գըր-պաններուն մէջ պտըտցնելով։

— Միքայէլ աղա, չիտա՞ն ինչ կուղէ կոր նէ ... հիմա քանի մը դրուչին համար պան-քայի թո՛ղթ աւրէ եավրուս ...

— Քա նասը՛լ պանքայի թուղթ ... սի-կառայի թուղթ պիլէ չիգայ ... համալին փարայ պիտի տայ՝ ինէ կուղէ կոր ... աս ալ սալաթային եաղըն էր կըսէ Միքայէլ աղա ցած ձայնով, և դրպանէն հինգնոց մը հանելով բեռնակիրին կուտայ, և երեքը մէկ կառք մը նստելով՝ ճամբայ կեկան, պակաթ-ներն ալ կառապանին քով ղետեղելով։

— Զի մըսիս եավրուս Մկրտիչ, բալթօիդ եախան վեր դառցուր, կըսէ մայրը երեսները շոյելով ...

— Նօ՛ ... չեմ մըսիղ, մէ՛ ... Ժը վու բղի, պէտք է ող ինծի Պաթիսդ ըսէք աս-կէ վեղջը իմ անունս Պաթիսդ է ...

— Դուն խաս քէթէն էս եավրուս, ինչո՛ւ Բաթիսթա ըլլաս, քեզի պէս բաթիսթա կա՞յ, քիտցան ... եավրում զաւակս ...

— Պաթիսդ Մկրտիչ ըսել է մայդ ... ալաֆղանկարն մէջ Մկրտիչին Պաթիսդ կըսեն ...

— Քա եավրուս, ատ պայաղի անո՛նն ալ ուրկէ գտեր ես ... չօգ չէ՛յ ...

— Կայնէ նայինք կընիկ, ես չէ՛թան պէ-

զիին ալ խայիլ եմ, երեւոյցածը մութվախ-աստառի է, էկէր զէնահաթն ալ թամամ չէ սորվեր նէ, իշիմիզ վար, պիր վարըտը կէ-ճէտէն, պիր տէ տիւշտիւ պաճատան ...

— Դուն կը տեսնաս Մկրտիչս, տուներ-նիս առը խօվանի պիտի ըլլայ ...

— Մայդ, է՛ն աղաջ քու աստանեղդ պիտի ղէքաղէ ընեմ ... կըսէ Պաթիսդ։

— Հէ՛ ...

— Քու աղանեղդ, աղանեղդ պիտի չինեմ ...

— Հա եավրուս, մէյմը տուն իյնանք, առաջ բաղնիք մը երթաս թէմիզնաս տէ ան-կէ ետքը իրաւ առղըներս չինէ քի տեսնողը բուրդ ու բապուճ վրադ վաղէ ...

— Ես ... ը' ... կաղող եմ սան ֆէղ սանթիվաը տուլէօղ, ամէնը մէկ աղղաչէ ընել ... բողղովին նող սիսթէմով ...

— Քուզում եավրուս, հիմա սիրտ մի հատցուներ, ես աս իրիկուն կէօքսիւդ վաթ-կա մը դնեմ տէ ծանըդ պողազըդ, շտկուի, վաղը ուղածիդ պէս կը խօրաթուիս ... կըսէ մայրը, ու կառքը նոյն աստն տանը դրան կը ժօտենայ։

Ամբողջ դրացիները՝ պատուհանները, դուռները թափած են, բոլորը մէկ՝ անհամ-բեր կըսպասեն այն միւսիւ Մկրտիչին որ, ասկէ ութը տարի առաջ ասմաներէն խօռուի կը գողնար, պաքալաքիներուն հետ կուկուչ կը խաղար, և որուն համար «սօխաթին Մկը-րը» անուն դրած էին դուռ դրացի։

— Աչկդ լուս էպրոս հանում ... խա-տէմի զաւակ ըլլայ ... տէ՛ մաշալան ...

— Բարով եկաւ հաղար բարի էպրոս հա-նում, խերը տեսնաս ...

— Խայրըլը խատէմի զաւակ ըլլայ բու-րուկ ... բարի պաուղ զաւակ ըլլայ ... կըսէին բոլոր տանը մօտ նստողները, որոնք առանց սեպելու տեղացող անձրեւը, լոկ հե-տաքրքրութեան համար դուրս թափած էին։

— Շնորհակալ եմ, օրերնիդ շատ ըլլայ ամա, եավրուս մըսեր է վաքօռին մէջը տէ կէօքսը խալլայէր է ...

— Էյ ան եօլճիութան սէմլրէ է, կըլլայ, ոտքին տաք ճուր, կոնակին ալ խավլու, տահա կուզես նէ, խախլէն թիւթսիւ տուր,

վրայէն ալ չի լուացուած ֆանէլա մը գիր, բիրի բակ կըլլայ ...

— Ապրիք քի սիրտ կը հատցունէք ... ծառք պազ Բաթիսթաս հավրում ... բիւթիւն ճամբադ պէքէյօղնեքն են ...

— Բա նասըլ Բաթիսթա, զահէր մօրը հէտիյէ Թօփ մը բերեր է հա՛ ... աֆէրիմ հավրում ...

— Չէ ճանրմ, իշտէ ալուորային ֆռէն-կիստանը հաթիմ պիթիմ եղաւ տէ եկա՛ւ նէ, հոն տեղի վարպետները անուռը փոխեր Բաթիսթա դրեր են, մէյէր իրենց զէնահաթիին մէջը մենծ բան է եղեր ...

— Չօգ չէ՛յ ... պուռուտա իշիթմէմիշ իտիմ ... նէ իսէ, պարէ քէթէն զնէին, բաթիսթա՛ս ինչ է ... ըլլալէն ետքը կէնէ քէթէնը բան մըն է ...

— Սուս եղիր ես ալ ատ ըսի ամա, ա-տէթը ինչ է նէ ան պիտի ըլլայ եղէր ի՛նչ ֆայտա ...

— Էյ հիմա միւսիւ Բաթիսթան ... լե-դուս ալ չի դառնար կոր, ի՛նչ զէնահաթ սորվեր է, քա Էպրոս քուրո՛ւկ ...

— Տիշճի՛, տիշճի՛, հէմ կըսէ կոր քի, Թաքիքէին մէջը, եռսուն երկու առղընիդ չիմացունելուկան կը հանեմ լէպլէպի պէս ալուճնիդ կը լեցունեմ տէյի ...

— Վախ վախ վախ, գիտնայի նէ չէի շինել տար, Բաթիսթան կը պէքէյէի ... վախ վախ վախ ...

— Տէր ողորմա՛յ ... տնաչէն, գիտէիք քի տղաս տիւրօման առնէր կար պիտի ...

— Էյ նէ իսէ, կոյրին նէ նորէն չինել կուտանք ...

— Հայտէ հավրուս տուն իյնանք, հիմա հարըդ ներսը կրակ կը կարի, ըսելով ներս կը քաշուին և ամէնուն դուռը կը գոցուի։

— Մա՛յլ ... ես կը քաշուիմ կող, բայց կաղնի՛ է ող ինծի բաքէ մը սիկաղ աղնէք ...

— Եավրուս ինտոր աս պանը ըրիր, ին-տոր վաքօռին մէջը տիխաթ չըրիր քի առջի պերան խորաթադ հասկնայի ... ի՛նչ է, ինչ կուղես ...

— Թապա, Թապա կուղեմ, վաղժուած եմ Թապաթ ...

— Հա՛ նայէ, ես ատ խելք չըրի ...

տաք տաք Թապան ալ աղէկ է, հէմ ալ սանճիկդ ալ դէմ կուգայ ...

— Ո՛չ ... կուղեմ ող սիկաղա, բաքէթ մը սիկաղա ունենամ ...

— Հա՛ ... Թիւթիւն ... բէք աղէկ հավրուս գնայ առ ...

— Է՛ ... տըլ՛աղժան ...

— Հա՛ ... աժան է աժան, քսաննոց բաքէթէն բռնէ մինչև երկու զրուշ հարուր փարտյ Թիւթիւն կայ, հայտէ հավրուս մէյ մը սօխախ ելիր տէ ինքիդինքդ ցուցուր, հէմ դուն կէս մը հէքիմ կը սեպուիս, պէտք է քի աչկի երեւաս ...

— Ո՛չ ... կուղեմ ըսել դղամ, դղամ մայդս, իղաւ ող հիմա կուղեմ, բայց վերջը եղը վաստըկիմ, աթըրիէս բանամ, ա՛յն ա-տեն ...

— Հա՛ ... հասկցա՛յ ... էյ կայնէ ա-ղապայէդ ուղեմ, ըսելով ներս կերթայ, մինչ Միքայէլ աղա, երկու ձեռքը գլխուն դրած կը մտածէր թէ՛ ութը տարի շարունակ դրամ հասցնելէ վերջ, ինը գրպանները պարապ կատարեալ հաւկիթ մը դէմն ունէր հիմա։

— Ինծի նայէ Միքայէլ աղա, Բաթիս-տաներնուս քանի մը զրուշ տուր տէ երթայ Թիւթիւն առնէ, տղան քեզի կը քաշուի կոր ըսելու ...

— Կընի՛կ, ալթըն հէրիք չէ՛ ի՛նչխըտար տուինք նէ, հո՛ս ալ տէվամ պիտի ընէ մաս-րաֆը ...

— Դուն վաղը մէկալնոր կը տեսնաս, օ-լուխի պէս օսկի վաստակը, չի նայի՛ս, եկաւ չեկաւ գիտես քի ամէնուն նոր արեւ ցա-թեց ...

— Նա՛, սա մէճիտիյէն ալ տուր տէ նա-յինք սօնը ուր կերթայ ...

Տիկին Էլպիս դրամը գաւկիթ տալով կը-սէ,

— Նա հավրում, քեզի մէճիտիյէ մը, առ տէ գնայ ինչի քի պէտքութիւն ունիս նէ առ, հէմ ալ չիտակ ճամբան ելիր քի, ամէն մարդ տեսնայ քի եկեր ես տէյի, սանկ ին-քիդինքդ մէյ մը ցուցուր ...

— Վուի՛, վուի՛, մէղսի, ես հիմա պի-տի եղթամ, է ժը վիէնտղէ Թուլթցուիդ ...

— Հա հավրում, դուն գնայ եկուր տէ, ես Թիւթսիւղ հաղըր ընեմ ... ըսելով տը-

դան ճամբու կը դնէ, երբ լաւ մը մութը կոխած էր արդէն:

— Միքայէլ աղա՛, հիմա առդայի ցաւով մէկը գալու ըլլայ նէ ի՞նչ ճուղապ տամ ...

— Կայնէ նայի՞նք ... տահա եկած վարստին խալիմը պիտէ թող չի տուին ... Մկըրտիչը չեկած բիւթիւն հիշ մէկուն ակունքէն ցաւեր կոր տէ հիմա գալուն պէս երբեք չի պիտի ընեն ...

— Անանկը չէ, վարպետ տիշնի եկաւ տէյի մէյմը չալ ըլլայ նէ դուն կը տեսնաս եկողները ...

— Հայտէ դուն սա բռնասայով միսը տաքը դիր տէ երկու լոխմա հաց ուտենք, հիմա ան ալ ուրէնէ կուգայ ...

— Եավրուխ հանրմ պուտի մը պիտէ չի չնեցի ածէլէյով ... աչկա ելլայ ...

— Ան հանրմ պուտիին աղէկը կուտէ ետքը, դուն հոգ մընէր, հէմ ալ լոխման քեզի չի ցուցնէր ...

— Ան չէ ամա Միքայէլ աղա՛, աս տղուն խամէթը ելլալու ըլլայ նէ, քանի՞ հազար ուղեւու է, տեսա՞ր մի մտմտալիք բանը, կըսէ Տիկին մայրը, շուարած ձեւ մը առնելով:

— Ինծի կուգայ քի սէվինճըզ գիհնըդ տաղըդ միշտ է ըրեր կընիկ ... հէլէ երկու օր մը անի նայինք, ի՞նչ կըլլայ ինչ չըլլար ...

— Անոր համար քի գալուն պէս աշխարհք դուռ բէնճիրէ չեւաւ ... անանաս ի՞նչ իրար անցան ...

— Քի սէրսէ՛մ կընիկ, մահալլէյն թէֆով ալ մըն ալ անցունելու ըլլան նէ բիւթիւն բէնճիրէն կեցան ... հայտէ՛, հայտէ՛, գնայ կերակուրը հազըր ըրէ, հիմա ուր է նէ կուգայ տղան, հէլպէթ անօթի է ...

Եւ իրօք, մեր հաւկիթին մէջինը նոյն տեսն եկաւ, գլխարկը մէկ կողմ նետելով՝ և քալթօն հանելով,

— Ժր մը սուի դըթաղսէ՞ ...

— Համմէ՞ ... կըսէ հայրը, չի հասկնալով ըսածը ...

— Ո՛ւֆ ... ողչափ դժուաղ պիտի ըլլայ ... ը՛ ... ը՛ ... հայեղէն խօսիլս ... ես ող միշտ ա բաղի վաղժուած եմ գաղիէղէն խօսելու ...

— Տղաս, զարար չունի ամա, միւշտէ-

րիներուդ համար զօռ պիտի ըլլայ ... տեսնոցմէ շատը ատ լեզուն չիտեն ...

— Հոգ չէ, անոնք շատ չի տեսել կը վաղժուին ...

— Հայտեցէ՛ք, կերակուրը կը պաղի կոր, կը ձայնէ էպրոս վարէն ...

— Հայտէ տղաս կրթանք քի մը բան ուտենք ... խօսք կառնէ Միքայէլ աղա իր բարիգիէն(՞)ին:

— Ա՛ ... տակաւին ... դուք ողչափ կանուխ կը ճաշէք, աբէթի կունենա՞ք ող ...

— Նասըլ Յարէթի օղլում, Յարէթ մաբէթ գալիք չունին, մենք միզի ենք, երթանք կերակուր ուտենք ...

— Այո՛ ... կը հասկընա՛մ, բայց կանուխ է ըսել կուգեմ ... մենք ա բաղի գղէթէ ասկէ ... ը՛ ... ը՛ ... մէկուկէս ժամ վեղ-ջը կը ճաշենք ...

— Հա ամա աստեղ լօգանթայի պէս պիր տիւղ օճախը վարօռ քէօմիւրիւ չեն նետէր օղլում, կրակը կերակուրը տաքցունելէն ետքը պիտի թաղէ քի առտուն խախլէի դէմ գայ ... ըսելով հայր ու զաւակ վար կիչ-նան սեղանատուն:

— Ողչափ ուղախ եմ ... ծնողացս հեա գտնուելուս, բան մը ող ութը տաղիէ ի վեղ ... ինչպէս կըսեն ... Ժր մանգէ լ'օգգապիօն ...

— Աֆէրիմ տղաս, անանկ գաղինօ մաղինօ ալըմիշ չըլլաս, նայէ քի տունն ի վեր ըլլաս, կըսէ Միքայէլ աղա, մինչ Տիկին էպրոս բռնասայով միսը մէջտեղ կը բերէ ...

— Աֆ կընես եավրուս, ասոր խառչըլամաի տալմիշ եղանք տէ չի կրցի քեզի կերակուր պատրաստելու, կըսէ էպրոս ինքն ալ սեղան նստելով:

— Ա՛ ... մենք ա բաղի շատ կը սիղենք ասրէղծ ...

— Հո՛ն ալ բռնաս կայ ... բռնասային ի՞նչ կըսեն ...

— Ա՛ ... մայդ դուք սխալեցաք, ասոր ասրէղծ կըսեն, կը խաշէն և ձեղքով գլուխս նեղը կը ծծեն ...

— Տէր ողորմեայ ըսէ եավրում, հասկըցայ թաղէ սօխ է ըսածդ քի իրաւ բռնասայի կըլմանի ամա, ան չեն խաշէր որդտի, հուժ կուտեն ...

— Էյ հայտէ օղլում պաշայէ նայինք...
կըսէ հայրը:

— Ո՛հ, ո՛հ, և ձեզի ալ չեմ ձգեղ ո՛ղ
ուտէք տաք տաք ձեր ակղանեղուն շատ վը-
նաս է, պէտք է քիչ մը պաղի...

— Պէ օղլում անօթի ենք մենք...

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ, շատ գէշ բան է տաք
կեղակուղ ուտելը...

— Պէ եավրուս մենք ուտենք տէ դուն
կուզես նէ պէքէյէ, ասանկ ալըմիշ ենք
եղէր, նէ՞ ֆայտա...

Ճաշը շատ տարօրինակ կ'անցնի, ճաշէն
վերջ մեր միւսիւ Պաթիսթը վեր կ'ալուն
պաուլը բանալով մէջի գործիքները մէկիկ
մէկիկ կը ցուցնէ իր ծնողքին և անոնց բե-
րանները քննելով,

— Ձեզ բեղանները պէտք է դէբաղէ ընել...

— Ձը հասկըցայ եավրում, բերանիս մէջը
հիւանդութիւն մը գտար կըսէ մայրը:

— Եթէ չի նայիս՝ կըլլայ ող հիւանդու-
թիւն մը դայ...

— Արեւդ սրեմ, հէլպէթ պիտի նայիս,
ես քեզի ինչո՞ւ աղ պօյը բերեմ եմ...

— Ինծի նայէ կընիկ, առաջ մէկ քանի
միւշտէրի մը նայի տէ ետքէն բերանդ առ-
ջին դէր, հինգ վեց հատ ակառ ունիս նէ՞
անոնք ալ վրայ չերթան...

— Մեղա՛յ, զահէր տղաս աճէմի է...

— Ձէ ամա, նէ լազըմ...

Ու հաղիւ թէ սուրճերնին պիտի խմէին,
յանկարձ դուռը զարնուելով՝ կղակը ձերմակ
եազմայով կապած կին մը, ֆռէնկիստանէն
նոր եկած տիշտիկն տունը աս է ըսելով՝ ներս
կը մտնայ:

Յաջորդ թիւով,

Այո՛, յաջորդ թիւով պիտի շարունակենք
մեր հաւկիթին մէջինն ատամնաբուժութիւն-
ը, որուն համար այժմէն կըսենք թէ՛ շատ
ջղայինները չի կարդան, խնդալէն չի մարե-
լու համար:

Յաջորդ թիւով ուրեմն, ցտեսութիւն:

ԼԻԼԱ



ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ

[ՏԱՆԹԷԶԻ]

Ա. — Պիտի սիրես կինդ անձիդ պէս:

Բ. — Պագոս Երբուններդ ուրիշ ունի-
ներու այտերէն համբոյրներ չի պիտի փաղեմ.
վերջապէս քեզի արգիլուած պիտի ըլլայ հա-
սարակաց պարտեզէն ծաղիկներ փրցնել,
փունջ կապել ու անոնց բոյրովը գինովնալ:

Գ. — Ո՛ւր որ երթաս, վառվառն աչ-
ներդ իսեալ սերը չպիտի հետապնդեն անկէ
եսք, քու հորիզոնդ սահմանափակուած պիտի
ըլլայ... Նազելափալիլաբուք կեսիդ դիմա-
բասուերը պէտք է որ պակերանայ աչքիդ
առջեւ միշտ, եթէ գնուիս իսկ փափուկ սե-
ռի ներկայացուցիչներուն դիւթիչ ու հրա-
պուրիչ խմբակին մէջ:

Դ. — Ձի պիտի կրնաս երթալ Բոխ-
բալ եւ համանման վայրեր եւ ոչ ալ պիտի
կրնաս հետապնդել ֆօթոները առաջուն պէս:

Ե. — Կիրակի օրերը՝ պիտի բաւականա-
մաս լոկ ֆագիմօ երթալով՝ հետդ առած կեսդ:
Օրուն քաղցուկը պիտի փարսեք երկի ու
կրնիկ կէս տուգիմա գաւաթ զարեջուրի մէջ:

Զ. — Կանուխ պիտի արքնաս, եթէ ուշ
պառկած իսկ ըլլաս. կէս գիշերին ալ պա-
րասակամութիւն ցոյց պիտի տաս իկիկիդ
ֆաբրիկներուն:

Է. — Շաբաթը երկու անգամ պիտի ա-
ծիլուիս՝ հինգշաբթի եւ շաբաթ օրերը, եթէ
կուզես որ կնոջդ աչքին արիւր առած մէկը
չ'երեւալ:

Ը. — Հակառակ նիհար բօրյութեանդ, ար-
տաքայ կարգի ծախսերու չի բոյլասելուն,
ստիպուած պիտի ըլլաս գնելու նուփօթ գրե-
խարկ, եղանակին համեմատ հագուստ ու կա-
պուստ, որ ֆօքիւմ ֆօքի կազմէ անոր:

Թ. — Նեղ ու սրածայր կօշիկներ պիտի
հագնիս ներս հետ պոյսի ելած ասեղդ՝ ա-
ւաչին շիք երեւցալու համար:

Ժ. — Մսածումիդ կեդրոնը պիտի ըլլայ
կինդ խնամել, պաշիւղ պաշտպանել ու այդ
լուծը քանի սիրայօժար միջեւ գերեզման՝
է իսեալդ: Մեռնիկդ ետք վստահ եղիր որ
սիկիկդ կիրակուսի օրերը խունկ պիտի ծը-
խէ հոգիիդ համար:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷԶԵՐԵԱՆ

Ո՞՞՞ ԱՄՈՒՆՈՒԹԻԱՆ ՆԱԽԵՐԱՆԵՐՈՒՆ

Անցեալ օր ընդունեցայ երկտող նամակ մը, զորս իւր շահեկանութեան համար կը փութամ հոս արտատպել: Ահաւասիկ:

«Սիրելի Միգոօրիս,

«Ներկայիս կը խնդրեմ ձեզմէ՝ որպէս զի «հանիֆ ի մոսոյ «Հանրագիտակ» ի միջոցաւ «ձեր կարծիքը յայտնել թէ՝ այլ մարդ մը, «ի՞նչ միջոցներ ձեռք առնելու է իր կնոջ «հանդեպ, բնական կարկը միտ խաղաղ «եւ եղանակ պահելու համար:

«Ընդունեցե՛ք եւլն.

«Բարեկամ մը»

Ազնիւ բարեկամ, (քանի որ այդպէս կը կոչէք զիս) չեմ գիտեր ինչո՞ւ ստուերի մէջ կը դեգերիք և այսպէս ձեզ ճանչցնելու պատիւէն կը զրկէք զիս: Ձեր երկտողը որքան կարճ, նոյնքան կարեւոր և փափուկ խնդիր մը կը յուզէ, այնպէս որ, հակառակ այդ հանգոյցին լուծման համար հարկ եղած տաղանդը և փորձառութիւնը չունենալուս, լոկ ձեր փափաքին յագուրդ տալու համար, կը փութամ ստորեւ ամփոփել այն կարծիքները, որոնք ժամանակին ես ալ ձեզ պէս հետագործիք, ամուսնացեալ բարեկամներէ հաւաքած եմ:

Ուրեմն մտիկ ըրէք.

Երբեք մի ամուսնանաք Ֆեմինիզմի այս դարուն:

Իսկ եթէ դուք ալ իսպէշեբեան բարեկամիս նման ամուսնութեան վսեմ խնկարկուններէն էք և դիտաւորութիւն ունիք անպատճառ ... մէկ ու կէս ըլլալ:

Չանացէք գտնել սիրտ մը որ վարակուած չըլլայ ... Ֆեմինիզմի միջոցներէ:

Նշանածութեան սեզոնը շատ մի երկարէք ... ձեր պահանջումներուն նման: Յանկարծակի այցելութիւններ ըրէք ձեր իսկալ նշանածին, շատ ծածուկ գաղտնիքներու կրնաք այսպէսով տեղեակ ըլլալ:

Միշտ լուրջ եղէք ձեր ապագայ կնոջ հանդէպ, լուրջ՝ անոր բարեկամութիւններուն և ձեր ... կէսրոջ և քէնիին հանդէպ:

Այդ կէս ամուսնութեան շրջանին՝ ջանացէք ձեր դիրքին մեծ փալեր չի տալ, արտաքին երեւոյթնիւ պէտք է համապատասխանէ ձեր քսակին ներքինին:

Եթէ ունիք թերութիւններ, զորս կուզէք ծածկել, մի արբենաք, մի խաղաք: Այսպէսով այդ պակասութիւնները ինքնին կը ջնջուին:

Լաւ է միշտ փեսայ երթալ քան հարս առնել:

Ամուսնութենէ վերջ տունէն դուրս պահեցէք ձեր բոլոր բարեկամները, իսկ ... տունէն ներս՝ կարգացէք Քրիսթմսը:

Ընտանեկան յարաբերութիւն հաստատեցէք այնպիսի ամուսնացեալ ընտանեաց հետ՝ որոնց պատուաւորութիւնը ծանօթ ըլլայ ձեզ երկար տարիներէ ի վեր:

Ձեր կնոջ քաբիւններուն տեղի մի տաք, աշխատեցէք զանաւր ձեր իններուն մէջ ձուլել: Կնոջ այդ խօս բաղձանքները թէ՛ անվերջ են և թէ՛ կործանարար:

Կեանքիդ ընկերը սահմանուած էակին շատ մի խոստանար, նոյն իսկ առաջատար սենեակին մէջ, և հոն այնպիսի ընթացք մը բռնէ իբր թէ կուշտ ըլլալով սեղանի հրաւիրուէիր:

Միտէ կինդ սրտանց, և ջանա՛յ այդ գործիքը միանգամայն իրեն թէ յայտնել և թէ ծածկել:

Կին ապրանքը շատ ցուցահանդէսներու մի հաներ, այդ արդիւր որքան առատ, նոյնքան շատ գնահատողներ կան:

Շրջագայութեան, զբօսանքի, կամ պատուոյ ժամանակ, ուրիշ տատրակի թռչչներէն մի գրաւուիր, միշտ լաւ է որ աչքերդ կնոջ վրայ սեւեռեալ մնան:

Միշտ այնպէս համոզու՛մ գոյացուր ինքնիրենդ, իբր թէ քու կէսը չնաչխարհիկ արարած մը ըլլար:

Ժուժկալութիւնը առաջին պայման է ամուսնութեան մէջ: Կինը թունալից անուշեղէն մ'է, որչափ շատ ուտենք, այնքան շատ կը թունաւորուինք:

Միշտ կանոնաւոր պէտք է ըլլայ ընթացքը, ամէն երեկոյ աշխատէ որոշեալ ժամանակին տունդ վերադառնալ, երբեք մի յապաղիր:

Եւ վերջապէս յարգէ կինդ, որպէս զի անկէց միշտ յարգանք վայելես:

Ահա անանուն բարեկամ, այն գլխաւոր պարտականութիւնները, որոնց մէջ այլ մը պէտք է երբեք թերանայ՝ եթէ կ'ուզէ երջանիկ բոյն մը կազմակերպել:

ՄԻՈՂՈԹԻՍ

ՔԱՆԻԻ՝ ԿԱՌՆԵՔ

Գրական հրապարակեմ

Ամէն ապրանքի վրայ թէեւ գին մը կը դրուի՝ բայց գնորդը միշտ սակարկելու վարժուած ըլլալով, վաճառողն ալ ստիպուած է կա՛մ ապրանքներուն վրայ քիչ մը բարձր գին նշանակել՝ և կա՛մ եթէ չնշանակէ՝ քիչ մ'աւելի բարձր գին պահանջել:

Ես աւելի շահաւէտ կը տեսնեմ իմ ապրանքներս աճուրդով ծախելու, որպէս զի ո՛չ ես իմ յաճախորդներս խաբեմ՝ ո՛չ ալ անոնցմէ խաբուիմ: Սկսինք ուրեմն:

Քանիի՝ կ'առնէք գուլիսին խազ բացող, մաղերնին օժանդակելով փայլեցնող, երեսներն շարժող մեր նորելուկ դպրոցականները, ըսէ՛ք, քանիի՝ կ'առնէք: Մեր փողոցի օսլա-յագործը առանց անոնց անօթի պիտի մնար, վարսայարդարը՝ շատոնց պիտի դադրեցնէր վճարումները, անուշահոտութեանց գործարանները պիտի սնանկանային: — Գինեվաճառ Եանի՝ ծակ տամոց մը կուտայ անոնցմէ ամէն մէկուն համար, նպարավաճառ Գօջօ՝ չիլ փարանոց մը, ճաշարանատէր Սեղբոս՝ իր յաճախորդներուն առջեւէն աւելցած կերակուրներու լուացուքը, էսկիճի Ավրամ՝ անոնց հագուստները միայն առնելով զիրենք մէջտեղ կը նստէ: Դո՛ւք՝ քանիի՝ կը գնէք ուրեմն . . . :

Քանիի՝ կ'առնէք այն յօգուածագիրը՝ որնոր ասկէ երեք տարի առաջ Ֆրանսերէն թերթի մը մէջ հրատարակուած մէկ ո՛ր եւ է գրուածք, այս անգամ կաղն ի կաղը թարգմանելով, և էրցեսդը՝ Մարկոս աղբարի, Հանգին՝ Կարապետի միայն վերածելով կը հրատարակէ թերթերու մէջ ու կը ստորագրէ, և կը պահանջէ ալ որ զինք գրագէտ անուանենք:

Քանիի՝ կ'առնէք օրուան քաբօն աշխարհաբարը, Պոլիսի աշխարհաբարին քերականութիւնը, կարգ մը նորելուկ կարճ տափառ կըող դպրոցականներու ոտանաւորները: — Թէոդիկ՝ իր հինցած լասդիկ-կալօչներն անգամ չ'ուզեր փոխանակել անոնց հետ, եթէ ուրիշ յաճախորդ մը չ'ներկայանայ՝ անոնց ա-

մէնն ալ չեօր-չեօփի ամանը պիտի նետուին, գիտցած ըլլաք . . . :

Հիմա լա՛ւ ուշադրութիւն րէք խնդրեմ, ա՛յնպիսի ապրանքներ մ'ունիմ որոնց նմանը ո՛չ Ճաբոնիոյ մէջ տեսնուած է՝ ո՛չ ալ Ձիւնումաչինի մէջ, այդ ապրանքներն ալ այսօր աճուրդի կը հանեմ ահա՛, սու. . . ու. . . սսս, լուութիւն . . . :

Քանիի՝ կը գնէք սա Սիրունեան Վ. ի Հասքնիբի մասին մատենախօսական մը գըրող Աղապէկը. տեսէք ի՛նչ աղուոր շահեր ընել կուտայ ձեզի, իր ցկնած, հա՛ սխալեցայ, իր ձգնած մէկ գեղեցիկ se planer = սաւառնիլ բային համար միայն Գաղղիոյ Ակադեմիին կըրթիկ գումար մը շնորհեց անոր. իր՝ կոթուցի pédoncule, pétiole ու queue իմաստն ունենալը պարզած ըլլալուն համար՝ Մ. Մեծարեց, գեղեցիկ բանաստեղծութիւն մը ձօնեց անոր, տահա՛, տահա՛ ինչե՛ր կան ու կը լռեմ ըսելու, հիմա պատասխան տուէք, ո՛վ բանասէրներ, լեզուագէտներ, բուսաբաններ, քանիի՝ կը գնէք զինք: — Վանադացին իր մօրուքէն թել մը կուտայ իբր կանխավճար, ու կը խոստանայ յետոյ ամբողջը նուիրել: Սիրունեան Վ.՝ ակնոցի կոտրած ապակի մը: Ոմն՝ Սկիւտարէն կամուրջ երթալու համար մէկ անգամուն սոմսակի գինը. դո՛ւք ինչ կրնաք տալ, ծախու է, ունա վօլթա . . . տուէ վօթե . . . :

Բարոյական. — Ա. Ձիւպպէութիւնը փարայ չ'ըներ. — Բ. Ուրիշին խելքը քու յիմարութիւնդ չի պարտկեր. — Դ. Նորասիրութիւնը ամէն բանի մէջ՝ պօս խաճաներու գործ է. — Դ. Մարդ իր կօշիկէն վեր կընելու չէ. — Ե. Արժանիք ճանչնալ՝ մեծ բան է:

ՀՕՐՈՐԴԻ

ՄԵՐ ԹԵՐԹՕՆԸ

Ինչպէս ընթերցողները կը վկայեն, թէ մեր թերթօնը՝ Արսէն Լիւբեկի տարօրինակ կեանքը, մէկն է այն վէպերէն՝ որոնք քիչ անգամ պատեհութիւնը կուսնենք կարդալու: Տեղի անձկութեան պատճառաւ շարունակութիւնը յաջորդ թիւով պիտի հրատարակուի, ուր հանդիսատէսը պիտի ըլլաք նոր միջադէպի մը:

ՇԱՐԹՈՒՄՆ ԼՈՒՐԵՐ

ԽՐԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր անցեալ Շարթում լուրերու բաժնին մէջ, հարիւր քրտան ոսկինոց մուշտակապատ բալթօին առթիւ՝ «ամէն ոք հագած էր»ը պէտք է կարգալ՝ «ոմն ոք», քանի որ ամէն հնայիի դործը չէ դրամական այս անցուկ հրապարակին՝ հարիւր քտան ոսկի պահել մուշտակին մէջ:

ԲԵՐԱ. — Շարթում վերին Բանկալթիի կողմը տուն մը երեկոյին ուշ ատեն, հարս ու կէսուր բարձր ձայնով կռիւի մը բռնուած էին, հարսին ամուսնոյն վրայ հասնելովը՝ կռիւը եռաձայնի փոխուեցաւ. չենք գիտէր թէ եկման մէթոտով էր եղածը: (Ուստալը ճուրճինայ ըլլալու է... երբեք Մ. Խ.):

ԻԶՄԻՐ. — Տեղւոյս Հայ օրիորդները, ամէն իրիկուն Ֆռանկաց թաղը երթալով, երեսն իտէալ միւսիւններուն հետ... բայ խոնարհելու վրայ են: (Պռավօ մատմաղէլներ, անդրամօթիտ կարգուելուն ուղիղ ճամբան հիմա գտաք, տառօսը մերիններուն. Մ. Խ.):

ԲԵՐԱ. — Հոս արուեստագիտական աշխարհը չորս աչքով կ'սպասեն, որպէսզի Մարեանի միսալներու արժանացած մօնսօները փութոյ պնդութեամբ հրատարակուին, որոնցմէ փունջ մը կազմելով յատուկ քօնսէս մը պիտի տրուի:

ՆՈՅՆ. — Զարմանալին այն է որ, Բերայի մէջ այսչափ արուեստագէտներ գտնուելով հանդերձ ոչ ոք իմացեր է թէ՛ այդ տեսակ մրցում մը բացուած է եղեր Խտալիոյ մէջ: Զօգ չէ՞յ...:

ԻԶՄԻՐ. — Պատուաւոր և դրագէտ (.) վաճառական մը խոստացաւ երգէտն մը նուիրել դպրաց դասուն, պայմանաւ որ զինքը ովսանաններով փառաւորեն լրագիրներու մէջ, բայց խօսքը եղաւ տեղը չ'եկաւ...: (Ով որ համբերեցէ սպաննախ կերիցէ, կըսէ գիրքը. Մ. Խ.):

ՍԿՆԻՏԱՐ. — Խուլրուխ եաղիով խաթայիֆի, քէսպալ քէստանէի և թթու ման-

տոլինի սկամալը սկսաւ իր ցեպիւն ընել, հոս, մանաւանդ շարթ գիշերները:

ԳԱՏԸ-ԳԻԻՂ. — Մայրայեղ էքօնօմիթ օրիորդ մը բանջարավաճառին 100 փարայի համար մէճիտ մը աւել տալ ուզելէն վայրացած մարդուկը, դանակ քաշելուն առթիւ կըսուի թէ յիշեալ օրիորդը արսէվէի բռնուած է, և թէ ծանօթ մարապետին խնամքներուն յանձնուած: (Շարխայի օսկիներ կուտան մատմաղէլ ... Մ. Խ.):

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԷՏԻՐՆԷ. — Գ. էֆ. հաճեցէք անմիջապէս տարեկան ձեր բաժնեգիրը ղրկել, ըստ ձեր խոստման. երկու ամիս անցաւ սիրելի: **ԱՏԱԲԱԶԱՐ.** — Կ. Պուրմաեա՛ն էֆ. այս շաբթու ալ չի տեսնուեցանք: Արդեօք համոզուած էք թէ ԼԻԼԱ դրամը կը կերցնէ, բայց սուցթուրլու խոսամա մը կարող է տալու:

ՄՕՏ ԱՏԵՆԷՆ

ԵՒ ԿԱՄ

ԳԱԼ ՇԱՐԹՈՒ

ԿԱՄ ԵԹԷ ԳԱԼ ՇԱՐԹՈՒ ԶԸԼԼԱՑ
ՆՈՐԷՆ ՄՕՏ ԱՏԵՆԷՆ՝

ՀԱՄԷԿԻՆԷՆ
ԱՅԵՐԵՏՈՒԿՆԷՆ

Ursofmskr ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԵՆԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒԲԵԱՆ

Պապր-Ալի հասցեի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՐԻ ՆԱԾ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գինեւրու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելոյններու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—14



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ խանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Պեշագրութիւն մարֆային:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 շրչ.	Վեցամսեայ	25 շրչ.
Գաւառաց համար	» 54	»	27
Արսասանման	» 12 շրչ.	»	6 շրչ.


Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասեքի Աստուրեան տպարանի քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանսաբօսթով եւ կամ բօսթայի շտաբով 20 հաւա-
20 ղրուչի հաշուով:



Վեցամսեայ ՆՈՐ քաժանորդ գրուդին, քէ քերք պիտի տուի եւ քէ այսպի
սեղի վրայ իր ազդարարութիւնը պիտի դուրի ՏԱՍՆ ԱՆԳԱՄ, իոկ տարեկան
գրուդին՝ ԿՐԿԻՆՆՆՈյն պայմաններով

1875

187